

Բայց Վարդանակերտի նպատակը պատերազմը անոնց վրայ պէտք էր տարրեր ազդեցութիւն թողուլ (Ասողիկ, էջ 123—124. Ղևոնդ, էջ 23 եւ 130, Պատմ. Հայոց, Բ., էջ 382): Վարդ Պատրիկը ստուգելու եղած է մէկը, որ ձգտած է քաղաքական պարագաներուն յարմարիլ եւ անոնց համաձայն դործել: Նա իբրեւ թէ Վարդայ խաչին յայտնութեան ալ ահանատես եղած ըլլայ եւ Չ. Թ. Մայր Յուրակ հայերէն Չեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 11):

Վարդ Պատրիկ Ռչտունին երբեմն կը շփոթուի համանուն Արծրունիին հետ, որուն կինը Տարօնի Ս. Կարապետի վանքին մէջ մտնելուն համար սրահար կը մահանայ, զի կինը մուտքը հոն արգելուած էր (Տարմ. Չամչեան Չ. Մ., Պատմ. Հայոց, Բ., էջ 551, իսկ Վարդ Պատրիկի վանքի մասին հմմտ. Ոսկեան Չ. Չ., Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա 1940, էջ 210):

Վարդ Պատրիկի մահէն յետոյ «Մնայ որդի նորա Մուշեղ ի նմանութիւն հօրն իւրոյ» որ իր ժողովուրդը դժգոհ կը ձգէ (Շապ. Բաղ., էջ 36—37): Զինքը իր զարմին վերջինը կը ստիպուինք դնել. «Ապա հակասակութիւն եղեւ տանն Հայոց, զի ոչ կամեցան գտէրութիւն տանն Մանածի (այս է Ռչտունեաց, որուն ներկայացուցիչը նկատուած է Մանածիհր) եւ բաժանեցին զաշխարհս ի մէջ Բագրատունեաց եւ ի մէջ Ռչտունեաց» (անդ, էջ 37):

Տեառագային Ռչտունեաց երկրին կը տիրանայ Գաղիկ Սաչիկ, երբ Արծրունի եղբայրները Վասպուրական իրարու միջեւ կը բաժնեն (Թ. Արծ., էջ 222):

Կարելի է ուստի եւ Markwartի հետ արտայայտուել թէ՛ «Այս ժամանակէն (705/6) նաեւ Ռչտունիներու հօր տոհմը կ'աներևութանայ»⁴¹ (Südarmenien und die Tigrisquellen..., էջ 79*): Թէեւ զարեւր վերջ Սաչիկ կաթ. ի նախապայտի վանքին տուած կոնդակին մէջ կը յիշուի Գրիգոր իշխան Ռչտունեաց (հմմտ. Ոսկեան Չ. Չ., Վասպուրա-

⁴¹ Բուզայի արշաւանքներու շրջանին, երբ Ժբաք Ռչտունեաց երկիրը կը մտնէ, չկայ իշխան, չկայ ստամբուրդ, որ անոր ընդդիմադրէ եւ նա ժողովուրդը կը գերէ ու կը կոտորէ (Թ. Արծ., էջ 127—128): — Ռչտունեաց Գուրգանի գիւղի պատերազմի մասին հմմտ. Ղևոնդ Երկ, էջ 26: — Ռչտունի մականունը գործածողներ սցոթ. եւս կան:

կան-Վանի վանքերը, Բ., Վիեննա 1942, էջ 536, 580): Նա կրնար Ռչտունեաց դաւառին իշխան ըլլալ, սակայն Ռչտունեաց նախարարական տոհմէն սերելուն ապացոյց կը պակսի:

Ռչտունիներու նախարարական տունը հայ ազգին կու տայ կարող եւ մեծ նախարարներ ու զօրավարներ, որոնք արքայական ու հայրապետական դահերուն եւ նմանապէս ազնուական միւս գերդաստաններուն հետ ընդհանրապէս լաւ յարաբերութիւններ կը մշակեն եւ հայ ժողովուրդին բարօրութեան կը նպաստեն:

Ռչտունիներու (եւ նմանապէս Գնունիներու) տոհմաձառը դժելի լաւագոյն համարեցայ հրաժարիլ, զի բացեր ու պակասներ բաւական զգալի են:

Չ. Չ. ՈՍԿԵԱՆ

ԲԱՂԷՑԻ ԳՊՐՈՅԸ 1500—1700

(Շարունակութիւն եւ վերջ):

28. ՅՈՒԼԻՍՆԵՍ Վ. ԲԱՂԷՑԻ ԿՈՂՈՏ, ՊԱՏՐԻԱՐԿ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅՈՑ

«Երանի՛ թէ Կոլոտի ծննդեան, մանկութեան եւ երիտասարդութեան եւ այլ պարագաներն ու հանգամանքներն ալ ծանօթ ըլլային մեզի», կը գրէր Բարբէն Վ. Կիւլէսէրեան 1904ին, երբ կը գրէր իր մենագրութիւնը «Կոլոտ Յովհաննէս պատրիարք»¹:

Պիտի ջանամ այստեղ ամփոփել այն տեղեկութիւնները, որոնք կը հային Յովհաննէս Բաղիշեցոյ կենսագրութեան մինչեւ 1715:

Ծննդավայրը կը մատնանչէ Գրիգոր Շիրուանցի Շղթայակիր իր Վիպասանութեան մէջ, երբ կը գրէ 1711ին.

Եւ Յովհաննէսն Սողոյս եղեալ, Յոյժ գիտութեամբ շնորհօք լցեալ:

Այսպէս Սողոյ կ'անուանէ իր հայրենիքը նաեւ ինքն Յովհաննէս, 1719ին. «Ի Դ. Հայոց ի գաւառին Սողո՛, ի տեղին Սալնոյձոր, կեր-

¹ Վիեննա 1904, էջ Ժ:

տեալ ի Բղիշեցոյն Արծրունեաց, որ ածանցեալ կոչի Բաղէշ»²: Այս Սողո՛ (զրուած նաեւ Սողոց, Հողձ եւ Սոց) գաւառը եղած էր նաեւ Վարդան Բաղիշեցոյ ծննդավայրը: Կը վերաբերէր ան Աղձնեաց նահանգին, Բաղէշ քաղաքի հարաւակողմը, Վանայ ծով թափող Թուխայ գետին աջ եւ ձախ տարածութեան վրայ³, առած անունը Սողո՛ ձուանին հետ նոյն⁴: Աւանն եւ դաւառը նոր շրջանին նկատուած է մասն Բաղէշ նահանգին. ասկէ ինչպէս Վարդան, նոյնպէս անոր աշակերտը կոչուած են Բաղիշեցի:

Ծննդեան տարին պէտք է նկատել 1677/8, վասն զի, ինչպէս կը հաւատէ Յակոբ Նալբան, վախճանած է Յովհաննէս 63ամեայ 1741, փետրուար 13ին⁵: Ծնողաց անունները չեն աւանդուած մեզի:

Աշակերտած է Յովհաննէս Վարդան Բաղիշեցոյ Ամիրտօյի Դպրոցին մէջ, անոր ծնրութեան տարիներուն. կը նկատուի նաեւ Գրիգոր Շիրվանցոյ աշակերտ, ինչպէս նա ինքը կ'անուանէ ինքզինքը: Յովհաննէս նոյն ընթացքով 1698ին Վարդան Բաղիշեցիէն ըլլալով է իբր 1698ին Վարդան Բաղիշեցիէն. 1708ին Գրիգորէն Մուշի Ս. Կարապետի մէջ⁶:

Վարդան Բաղիշեցի վախճանեցաւ 1704, մարտ 31ին⁷: Նոյն տարուոյն Ամիրտօյին կը հեռանան հինգ միաբաններ, ոմանք վարդապետ. ուրիշներ՝ արեղայ: Անոնք որոշած էին մէկ սիրտ, մէկ հօգի շրջանուիլ իրարմէ: Գացին Ս. Կարապետի վանքը եւ զրուեցան վանքին միաբան: Գրիգոր Վ. Շիրվանցի կը կարգուի «սուաջնորդ Ս. Կարապետի վանքին» (Էջմ. 737): Կը նորոգեն վանքը. բայց

² Յիշատակարան պատմագրաբար, Կիւլէսէրեան, անդ, էջ 142:

³ Չ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն, էջ 250 եւ Աշխարհացոյցը:

⁴ Հիւրըման, Հին Հայոց տեղւոյ անուններ, էջ 179:

⁵ Յակոբ Նալբան, Գրքը կոչեցեալ Գանձարան ծանոցմանց, Կ. Պոլիս 1758, Ա., էջ 421. Խոսելով Եօթէ կազմուած տարիներու վրայ, ինչպէս 63ը, որոնք վտանգաւոր տարիներ են, կը գրէ. «Եւ լուսանհօգի Հայր վարդապետն մեր էս՝ ննջեաց ի Տէր ԿԳ ամի կենաց իւրոց».

Խոսքը Յովհաննէս Կոլոտի մասին է (հմմտ. Կիւլէսէրեան, անդ, էջ 75):

⁶ Յովհաննէսի կնիքը կը կրէ «ՌձԿԷ» (1708), «զոր չէ փոխած պատրիարքութեան տանն».

⁷ Կոլոտ իր Պատմութեան մէջ Վարդանի մահը սերեան, անդ, 135:

1708, մայիս 16ին⁸ երկրաշարժ մը կը կործանէ Եկեղեցոյն գմբեթը եւ կը խախտէ շէնքերը: Միաբանները կը լծուին գործի. կը վերականգնեն եկեղեցին եւ կը վերանորոգեն շէնքերը: Այս պատճառով արդէն պարտքի տակ գտնուած վանքը կը ծանրաբեռնուի նոր պարտքերով: Պարտատէրներու պատճառած նեղութիւններէն հարկադրուած կը փախչին միաբանները Կարնոյ դաւառ, կը ապաստան կը գտնեն Հնձուց վանքը (1711): Անկէ կը մեկնին զանազան ուղղութեամբ, Վանքը կը մեկնին զանազան ուղղութեամբ Ս. Կահանակերտ համար ողորմութիւն Ս. Կարապետի համար: Գրիգոր կ'անցնի Սիրիա եւ Յովհաննէս Կ. Պոլիս (1712)⁹: Այստեղ կը գտնէ Կոլոտ Սերաստացի Գասպարի¹⁰ քով ասպնջականութիւն: Քաղաքին պատրիարքն Սահակ Ապուշեցի. որ ամէն կերպ աշխատեց կ'ըլլայ Յովհաննէսի: Կը հանդանալակից կ'ըլլայ Յովհաննէսի: Կը հանդանալակից Ս. Կարապետի համար ողորմութիւն կուլին Ս. Կարապետի համար ողորմութիւն եւ նուէրներ: Յովհաննէս կը փութայ հասցնել զանոնք Գրիգորի, որ վերադարձած էր Տարօն: Վանքը կ'ազատի պարտքերէն (տե՛ս § 27):

Յովհաննէս՝ պատրիարք: — Յովհաննէս «վասն առաքինի բարուցն եւ եւս վասն անհամեմատ քարոզութեանն, որ գրէ թէ էր ազգիս մերոյ նոր Ոսկերեան եւ կրկին աստուածարան», գտած էր ժողովուրդին եւ անոր իշխաններուն քով համակրութիւն: Անոնք չթողուցին, որ ան վերադառնայ Տարօն: Իրեն յանձնեցին Երուսաղէմի պարտքերուն խնդիրը (1713): Նոյն տարուոյն ուխտաւորներուն հետ ուղարկեցին զինքը իբրեւ «աթոռակալ եւ վէճի» Երուսաղէմ, յանձնելով իրեն «չափաւոր» գումար մը, որ հանդանակուած էր Ս. Տեղեաց համար: «Ուխտ վանակուած էր Ս. Տեղեաց համար: Սեղեացի, կ'ըսէ Հաննէ, բնաւ իշխանը եւ ժողովուրդը Հայոց ընդ նմա (տպ. սա), թէ գործուրդը Հայոց ընդ նմա (տպ. սա), թէ գործուրդը Հայոց ընդ նմա (տպ. սա), թէ գործուրդը Հայոց ընդ նմա (տպ. սա) Սեղեացի մինչեւ ցհասանիլ մահուան եւս՝ Տեղեացի օգնական եմք քեզ»: Հասաւ ան Երուսաղէմ (1713 գատկէն [5 ապրիլ] յառաջ): Տեսաւ վանքին սոսկայի կացութիւնը. 800 քսակ պարտքի տակ էր. պարտատէրները «բարբառոս», մերայինք «լափիլղողք»: Նման կացութեան մէջ տեսած էր ան նաեւ Տարօնի Ս. Կարապետը. անցած էր ան տառապանքի

⁸ Կոլոտ, անդ, նշանակած ՌձԸ (1709). բայց Գրիգոր ունի ՌձԷ. ուստի 1708, մայիս 16:

⁹ Նուիրակութեան ելած են 1711ին. հետեւաբար Կոլոտ Կ. Պոլիս հասած ըլլալով է առ անազան 1712ին:

¹⁰ Հմմտ. Կիւլէսէրեան, էջ 69, ծան. 1 եւ 125:

